ԳՐՎԱԳՆԵՐ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ «ՈՍԿԵՂԵՆ ԿՅԱՆՔ»-ԻՑ

Վազգեն Առաջինի ծննդյան 90-ամյակի նախորեին, հովանավորությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը, Հովհաննես Պապիկյանի և Զոյա Գալստյանի աշխատասիրությամբ, լույս ընծայեց «Ոսկեղեն կյանք» գրքույկը, որում զետեղված են երջանկահիշատակ Հայրապետի կյանքի վերջին տարիների մի շարք ելույթների, զրույցների և խորհրդածությունների՝ իրենց կատարած տեսագրությունների կենդանի խոսքի սղագրությունները: Ինչպես գրքի առաջաբանում հեղինակներն են նշում, Վազգեն Վեհափառի «հյութեղ լեզուն, աշխույժ ու պատկերավոր պատմելաոճը, բանավոր խոսքի գեղեցիկ արտահայտչաձևերը առանձնակի մի հմայք են հաղորդում ասելիքին: Դրանք ինչ-որ չափով իրենց հմայքը կորցնում են խոսքի սղագրության պարագայում, սակայն ասելիքը մնում է իր ինքնատիպության մեջ, մնում է իրենը՝ մասունք որպես, որ հետագա սերունդների համար ինքնաճանաչման ու գործելակերպի դաս է»:

Գիրքը բացվում է Վազգեն Առաջինի մատուցած վերջին՝ 1994 թ. հունվարի 6-ի Պատարագի լուսանկարով: Մերունազարդ Կաթողիկոսի հայացքում, ասես, կենդանիորեն դրոշմված լինի մեր Եկեղեցու առաջին դարերի երանաշնորհ Հայրապետների առաքելականության կնիքը:

Հեղինակների իսկ բնորոշմամբ, առանձնակի արժեք ունի հատկապես առաջին հրապարակումը, որում ներկայացվում է 1991 թ. սեպտեմբերի 20-ին Վազգեն Առաջինի ինքնակենսագրական խոսքը, որն ասվել է նկարահանողների խնդրանքով: Հայոց Հայրապետը պատմում է իր կյանքի մինչ կաթողիկոս ընտրվելը ընկած շրջանի մասին այնպիսի մի խտացված ընդհանրացմամբ, որ, ինքնակենսագրական արժեքավոր տեղեկություններից բացի, ուրվագծվում է նաև Հայոց Եկեղեցու վիճակը Մայր Աթոռում և Սփյուռքում՝ 1940-50-ական թթ.:

Վեհափառը պատմում է, որ 1930-ական թթ., միջազգային ընդհանուր լարվածության և քաղաքական աննպաստ մթնոլորտում իսկ նա, իր ելույթներում և հոդվածներում շարունակ շեշտել է, որ 1918 թվականի անկախ Հայաստանը չի վերացել, այլ մեկ ուրիշ կարգավիճակով շարունակվել է 1920 թվականի խորհրդայնացումից հետո: Հատկանշական է, որ այս մասին Վեհափառը պատմում է 1990 թ. Հայաստանի անկախության հռչակման նախորեին, որը մեկ անգամ ևս գալիս է հավաստելու, որ այս ըմբռնումը Հայոց Հայրապետի անխախտ համոզումն է եղել, այլ ոչ թե հանուն Եկեղեցու խորհրդային իշխանությունների հետ լավ հարաբերություններ մշակելու դիվանագիտական մի կեցվածք:

Հուշագրական այս խոսքը վկայում է նաև, որ մինչև 1956 թվականն իսկ նախ՝ աշխարհական Կարապետ Պալճյանը և ապա՝ Վազգեն վարդապետ ու

եպիսկոպոս Պալճյանն իր ձեռավորված ըմբռնումներն ու ծրագրերն ուներ՝ Հայրենիքին զորակցելու և Հայաստանի շուրջը աշխարհասփյուռ Հայությանը համախմբելու, որոնք խորագետ մի քաղաքականությամբ և իմաստուն ընթացքով սկսեց իրագործել կաթողիկոսության շրջանում:

Գրքում զետեղված «Երկու Աթոռների ոսկեկամար կապը» երկխոսությունը գրառումն է Հայոց Հայրապետի և այն ժամանակ Կիլիկյան Աթոռի գահակալ Գարեգին Բ Կաթողիկոսի 1991 թ. հունիսին Վեհարանի շքամուտքին տեսախցիկի առջև ունեցած զրույցի: Երկու Հայրապետներն իրենց մտածումներն են կիսում անկախության ճանապարհը բռնած Հայաստանի ապագայի, Արցախյան հիմնահարցի, սկսված հոգևոր վերազարթոնքի, այն Հայոց Եկեղեցու հունով ծավալելու և ժամանակի մտահոգություններից ծնված մի շարք այլ հարցերի մասին:

Այսօր ևս այնքան այժմեականորեն հնչող այս երկխոսությունում հատկանշական է այն հանգամանքը, որ ինչպես մինչև 1956 թ. Հայոց ապագա Հայրապետը տեսնում էր գործունեության այն շրջանակը, ուր ինքը հետագայում գործելու էր որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, այնպես էլ Կիլիկյան Աթոռի գահակալի խոսքում տեսնում ենք եկեղեցական-կրոնական լայն գործունեության առաջ քաշված այն ծրագիրը, որի իրականացմանը Նորին Սրբությունը լծված է 1995 թ. Կաթողիկոսական ընտրությունից անմիջապես հետո:

Վեհափառ Հայրապետի տեսագրված խոսքի՝ գրքում բերված հրապարակումները հիմնականում նախորդում և հաջորդում են 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեին, և այս խոսքում երջանկահիշատակ Հայրապետը շեշտում է հատկապես երկու իրողություն: Առաջին, որ հայ ժողովրդի ազատության ու հոգևոր ինքնության գաղափարը պետականազուրկ տարիներին Հայոց Եկեղեցին հոգևոր մի ծրարումով պահել է իր գմբեթի ներքո և այժմ ընծայում է հայոց նորոգ պետականությանը, թե այն հոգևոր մի ժառանգորդությամբ դարերի խորքից է գալիս, և որի համար մեր ժողովուրդը պարտական է Հայոց Եկեղեցուն:

Երկրորդ՝ համազգային խանդավառության բերկրալից այդ օրերին, կարծես զգուշացնելով սպասվող քաղաքական վայրիվերումների, փոխադարձ կույր ատելության և հատվածական շահերի վրա հիմնված գործելակերպից հեռու մնալու մասին, Վեհափառը շեշտում է հայ ժողովրդի հոգևոր միության և Հայրենիքը որպես մտասևեռում ունենալու գաղափարը, որի խտացված արտահայտությունն է 1991 թ. սեպտեմբերի 29-ին տեղի ունեցած Սրբալույս Մյուռոնի օրհնության ժամանակ ասված խոսքի հետևյալ հատվածը. «Հայե՛ր, հոգևոր եղբայրներ Մեր, այս Սրբազան Մյուռոնով՝ միացե՛ք, եղբայրացե՛ք, եղե՛ք մեկ կա՛մք, եղե՛ք մեկ ուրախություն, եղե՛ք մեկ ցավ: Եղե՛ք մեկ ազգ, մեկ ընտանիք, մեկ ժայռացած երդում և հավատացե՛ք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին՝ սուրբ Արարատի հայացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո» (էջ 76):

Այս Գրքի էջերն ընթերցողին են փոխանցում վազգեն Առաջին երջանկահիշատակ Հայրապետի «Ոգեղեն կյանքի» այս պատգամները:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ